

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ, ՆՇՈՒՄՆԵՐ,
ԵՒ ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ**

*COMMUNICATIONS, NOTES
ET DISCUSSIONS*

ՄԱԿԱՐԱԳՈՒՅՆ ԵՐԵՒԱՆԻՄ ԶԻՐԱԿԱՆԱՑՈՒԱԾ ՅՈՒԹԱՐՁԱՆԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆԵՐԸ


Տարիներ առաջ Սուրբ Ղազար կղզու Մխիթարեան միաբանութեան հիմնադրման 300ամեակի առիթով Հայաստանի Հանրապետութեան գիտութիւնների ազգային ակադեմիան կազմակերպեց միջազգային գիտաժողով։

(Նկար 1)

(Նկար 2)

Կարեւորելով Սուրբ Ղազարի Մխիթարեան միաբանութեան եւ նրա հիմնադիր Մխիթար Վարդապետ Սեբաստացու (1676-1749) գերը հայ մշակոյթի, գիր ու գրականութեան, պատմու-

թեան, դաւանաբանութեան եւ հոգեկերտուածքի պահպանման գործում՝ Մխիթարեան միաբանութեան ընդհանուր Աբբահայր Հ. Եղիայ Շայրագոյն վարդապետ Քիլաղպեանը նամակով դիմեց Երեւանի քաղաքապետ պարոն Ալբերտ Բագէյեանին, խնդրելով քննութեան առնել մայր հայրենիքի մայրաքաղաք Երեւանի հրապարակներից մէկում կանգնեցնելու Մխիթար Սեբաստացու յուշարձանը (Նկար 1):



(Նկար 3)

Առաջարկը 2000ին դրական արձագանքի արժանացաւ քաղաքապետի կողմից: Յանձնարարուեց «Երեւաննախագիծ» ինստիտուտին ստեղծագործական խումբ ստեղծել եւ սկսել յուշարձանի նախագծման աշխատանքները, նախապէս առաջարկութիւն ներկայացնելով տեղի ընտրութեան վերաբերեալ: Մասնագէտները առաջարկեցին Մխիթար Սեբաստացու յուշարձանը տեղադրել Երեւանի Թումանեան, Սպենդիարեան եւ Զօրեան փողոցների հատման հատուածում գտնուող ոչ մեծ հրապարակում:

Առաջարկը հաւանութեան արժանացաւ քաղաքապետարանի կողմից: Ճարտարապետ Լեւոն Վարդանեանը եւ քանդակագործ Տիգրան Արզումանեանը ամիսներ անց 2001ին «Երեւաննախագիծ» ինստիտուտի տեխնիկական խորհրդի քննարկմանը ներկա-

յացրեցին Մխիթար Սեբաստացու յուշարձանի գիպսաձոյլ մոդելն ու նախագիծը: Որոշուեց յանձնարարել Հ. Վարդանեանին կարճ ժամկէտում աւարտել նախագիծը (Նկար 2): Յանձնարարութիւնը կատարուեց (Նկար 3, 4), ընտրուած հրապարակին յարող չէնքներից մէկի պատին տեղադրուեց յուշատախտակ՝ «Այս հրապարակի վրայ պիտի կանգնեցուի Մխիթար Սեբաստացու յուշարձանը»: Նոյնիսկ ցանկութիւն յայտնուեց հրապարակն էլ կոչել Սեբաստացու անուան: Սա 2001 թուականն էր: Այսօր հրապարակը կայ, բայց ցուցատախտակն ու յուշարձանը՝ աւաղ ոչ:



(Նկար 4)

Սակայն մեզ հետաքրքրող եւ քննութեան նիւթը յուշարձանի գեղարուեստական առանձնայատկութիւններն են:


Մխիթար Աբբահօր յուշարձանը Ս. Ղազար կղզում թերեւս նրա առաջին եւ առայժմ միակ արձանն է (Նկար 5): Յուշարձանի պատուանդանը սպիտակ մարմարակուռ է: Ուղղահայց պատուանդանը վեր է բարձրանում խաչաձեւ, աշխարհի չորս կողմերը տարածուող երկաստիճան հիմքի վրայ, որը կարծես խորհրդանշում է քրիստոնէութեան հիմնական խորհուրդը (Երկային ճշմարտութեան հասանելիութիւնը եւ տարածումը աշ-

խարհի չորս դին): Խորհուրդ՝ որի վրայ էր յենուած եւ որով ամուր եւ հաստատ ինքը՝ Աբբահայրը, եւ նրա անգնահատելի գործունէութիւնը Ս. Ղազարում։ Պատուանդանի վրայ նրա մարմնեղ բրոնզաձոյլ արձանն է։

Աբբահայրը ձեռքերը առաջ պարզած, կարծես նախ հրաւիրում է բոլորին Սուրբ Ղազար, ցուցանելու համար այն ինչ արուել է, եւ միւս կողմից կարծես ասում է, ահա այն ամէնը ինչ խոստացել էի, ինչին նուիրուել Զերն է, հայինը, հաւատաւոր ժողովրդինը, վայելէք, սովորէք եւ սովորեցրէք… յուշարձանի պատուանադանին հայերէն եւ իտալերէն գրութիւններ են (Նկար 6):



(Նկար 5)



(Նկար 6)

Յուշարձանը գրկաբաց դիմաւորում է Ս. Ղազարի հարիւրաւոր այցելուներին՝ ասելով «քարի եկաֆ…»։ Յուշարձանի գեղարւեստական յարդարանքը դասական լուծում ունի։

Հարկ է նկատել, որ Միհիթար Սեբաստացուն նուիրուած այլ գործեր էլ կան, յուշատախտակ Վենետիկի Ս. Մարտին եկեղեցու պատին¹ (Նկար 7), կիսանդրի-դիմաքանդակ Վենետիկի

1 Միհիթար Սեբաստացիին եւ Սուրբ Ղազարի Միհիթարեամ միարանութիւնը, ի Զերկիրն իտալիոյ, Երևան 2005, 215:

Մուլրադ Ռաֆաելեան վրաժարանի Կարլեւարիսի սրահում (Նկար 8)²: Իւղաներկով արուած իտալացի նկարիչ Ալեսանդրոյ Լոնգիի կտաւը (Նկար 9), խճանկար-դիմանկար (Նկար 10), նրա անունով է կոչւում **Ս. Ղազարի ներքին աստիճաններից մէկը** (Նկար 11) եւ այլն:



(Նկար 7)



(Նկար 8)

Ալեսանդրոյ Լոնգիի իւղաներկ կտաւը (Մխիթար Աբբահայր, 1742) իր յօրինուածքով իտալական դիմանկարի աւանդական ժանրի գործ է: Աբբահայրը, կարծես, մի պահ «կտրուել է» իր ծրագրերից, սեւեռուն հայեացքով նայում է իր հետեւորդներին, ներկայ եւ ապագայ իր հայրենակիցներին եւ հաւաստում, որ այն սուրբ գործը, որին որ նուիրուել է իրականացուելու է, որ իր ծրագրերը յստակ են, ազգանուէր: Աբբահօր գրչի տակ անաւարտ հերթական գիրքն է, սեղանին **Ս. Ղազարի** ընդարձակման ճարտարապետական նախագիծ-գծագիրը: Նրա դէմքի լուռ, բայց եւ իմաստուն արտայայտութիւնը, կարծես մէկ անդամ եւս հաստատում է իր իսկ խօսքերը ... ինչ իմ է՝ քոյ է, եւ որ ինչ քո՞իմ³:

-
- 2 Ի դէպ այս դիմաքանդակի կրկնօրինակը գտնելում է Երևանի Մխիթարական կրթահամալիրի նախարահում:
- 3 Մխիթար Սեբաստացու, Հայկագեամ բառարամի նկածութիւն, 1749, Մխիթար Սեբաստացին եւ Սուրբ Ղազարի Մխիթարեան միարանութիւնը, ի Զերկիրմ իտալիոյ, Երևան 2005, 215:



(Նկար 9)



(Նկար 10)



(Նկար 11)

Հայ մշակոյթի պահապաններից մէկը՝ փարոսը հայութեան համար⁴, Մխիթարը, թաղուած է Ս. Ղազարի Աւագ իսորանի առջեւ (Նկար 12):



(Նկար 12)

Այսպիսով, հայունիքից դուրս Մխիթար Սեբաստացու յիշատակը յաւերժացնող բաւականին բարձրարժէք կոթող յուշարձաններ կան, իսկ ինչպիսի՞ն պիտի լինէր նրա երեւանեան յուշարձանը:

Ցաւօք Մխիթար Աբբահօր երեւանեան յուշարձանի գեղարուեստական առանձնայատկութիւնների մասին կարող ենք դատել միայն քանդակագործ Տիգրան Արզումանեանի հեղինակած գիպսէ մողելից արուած լուսանկարների հիման վրայ (մողելը

4 ՊԶՏԻԿԵԱՆ, Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ վրդ., ՅՈՒԹԻԱՅ լոյս և ԺԱՊՅՈՒԹԻԱՅ. Մխիթարեամ Մշակութային վաստակը 1700-2005, ի Զերկիր կիրա իտուլիոյ, Երեւան 2005, 241:

չի պահպանուել): Այս լուսանկարների եւ բնօրինակի հիման վրայ է արուել նաեւ իրական մոդելի չափումով ճարտարապետ Լեւոն Վարդանեանի նախագիծը (Նկար 13, 14):



(Նկար 13)

Արձանը պիտի լինէր բրոնզաձոյլ, մօտ 3-3.20 մետր բարձրութեամբ: Այն իր կոմպոզիցիոն կառուցուածքով պատկերում է քայլող Աբբահօրը, որը իր աջ ձեռքում պահած ունի գրքի մէկ հատոր: Աբբահյը պատկերուած է իր մտքերով տարուած, ապագայ ծրագրերի բեռով պարուրուած, գլուխը երկնքին յառած քայլքի պահին: Արձանը չնայած պղնձաձոյլ յօրինուածքի, կարծես աւելի քարէ քանդակի տպաւրութիւն է թողնում, կորագիծ յարդարանք, գոգաւոր ծաւալներ եւ այլն: Բայց եւ այնպէս այն իր համաշափութիւններով համահունչ է այն հրապարակին, որտեղ պիտի դրուէր յուշարձանը: Միսիթար Սեբաստացու յուշարձանի ճարտարապետաքաղաքաշինական լուծումը իր մասշտարով եւ յօրինուածքով համահունչ էր թէ հրապարակի արդէն գոյութիւն ունեցող ճարտարապետութեանը եւ թէ Աբբահօր գործունէութեանը եւ աւանդին: Եթէ հրապարակը նախագծման պահին եւ այսօր էլ միայն արասպորտային հանդոյց է օգտագործում,

ապա վերակառուցումից եւ Աբբահօր արձանը տեղադրելուց յետոյ նախատեսւում էր, որ պիտի վերաիմաստաւորուի, փոխուի գործառոյթը, դառնայ հետիոտն, յանդստի ճեմուղի-հրապարակ: Յուշարձանի գրանիտէ պատուանդան-հարթակը (3.90մx11.7մ չափերով) խորհրդաբանօրէն «կրկնելու» էր Վենետիկի ծովածոցի կերպարը, Ա. Ղազար կղզիով, որի վրայ քայլում էր ինքը՝ Աբբահայրը, որպէս հիմնադիրը Միկիթարեան Միաբանութեան: Զուր եւ ցամաք համադրութեամբ յօրինուած պատուանդանը շրջապատուած պիտի լինէր ուղղանկիւն նկարուածքով սալայատակով (ներկայիս ասֆալտի փոխարէն), որը աւելի էր ընդգծելու տարածքի հետիոտն գործառոյթը, անցնելով, շրունակուելու էր յարակից փողոցները եւ ընդհանուր քաղաքաշինական միջավայրը դարձնելու էր աւելի բարեկարգ:



(Նկար 14)

Այս ամէնը նախագծով՝ սակայն, մեզ համար անյայտ պատճառներով գործընթացը մինչ օրս սառեցուած է, անյայտ է նախագծային փաթեթի գտնուելու վայրը, չկայ գիպսէ մողելը:

Մեզ յաջողուեց հանդիպել հեղինակներին: Նրանք այսօր էլ պատրաստ են շարունակել կիսատ մնացած գործը:

Միիթար Սեբաստացու իւղաներկ դիմանկարը, խճանկարը, դիմաքանդակը, Ա. Ղազարի յուշարձանը, բոլորն էլ քանդակուած եւ պատկերուած են բնօրինակի լուսանկարչական «նշտութեամբ», Արքահօրը յատուկ հանդերձանքով: Բոլորն էլ վարպետ հեղինակների գործեր են:

Երեւանեան յուշարձանը տարբերուամ է միւսներից: Այստեղ լուծուած են քաղաքաշինական, բարեկարգման, կանաչապատման, քանդակագործութեան, ճարտարապետութեան եւ դիզայնի համադրութեան համալիր մօտեցումներ: Յուշարձանի քանդակային, յատկապէս դիմաքանդակի գեղարուեստական լուծուամը աւելի արտիստիկ, բանաստեղծական նրբերանգ ունի, մոնումենտալութեան հետ մէկտեղ իր մասշտաբով աւելի մարդամօտ է, քաղաքային քանդակի գեղագիտութեանը յարիր:

Անշուշտ այսօր տարիներ առաջ ներկայացուած եւ հաստատուած էսքիզ-նախագծում շատ բան կը փոխուէր: Սակայն մէկ բան անփոփոխ է, Միիթար Սեբաստացու անդնահատելի ժառանգութիւնը, հայրենիքից հեռու, Սուրբ Ղազար կղզում հիմնած միաբանութիւնը եւ անձամբ Միիթար Սեբաստացու անմնացորդ նուիրումով արարուած դարաւոր գործունէութիւնը: Գործունէութիւն յանուն եւ ի նպաստ հայ մշակոյթի ուսումնասիրութեան, պահպանութեան, վերականգնման, հանրահոչակաման: Գործունէութիւն, որի արժեւորման հրամայականով պայմանաւորուած գոնէ հեղինակը իր արձանացած պատկերը պիտի ունենայ մայր հայրենիքի մայրաքաղաքում: Այս համեստ յուշարձանով գոնէ մեր անսահման երախտագիտութիւնը յայտնած կը լինենք մեծ հայորդուն, կ'արժեւորենք նրա եւ Սուրբ Ղազարի միաբանների հարիւրաւոր տարիների հայանպաստ աննախադէպ գործունէութիւնը:

ԱՆԻ ՀԱՅԿԱԶՈՒԻՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ